



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

<< 06 >> << 08 >> 2018թ.

N 01/07/3360-18

« ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ

Համաձայն «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի՝ արհեստակցական կազմակերպությունը հիմնադրվում է նրա հիմնախնդիրների (առնվազն 3 աշխատողի) նախաձեռնությամբ հրավիրված հիմնադիր ժողովի որոշմամբ:

Արհեստակցական միությունը ի դեմս իր ղեկավարի կամ ներկայացուցչի, իսկ մյուս կողմից գործատուն ի դեմս տեղական ինքնակառավարման մարմնի՝ համայնքի ղեկավարի, պարտավոր է իր ենթակայությամբ գործող աշխատողներին միավորող արհեստակցական միության հետ կնքել (վերակնքել) կոլեկտիվ պայմանագիր (համաձայնագիր) «Օրենսդրությամբ սահմանված կարգով» «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի համապատասխան:

«Ետևաբար» արհեստակցական կազմակերպություններին անդամակցելու, ինչպես նաև գործատուի կողմից համապատասխան արհեստակցական միությանը ֆինանսական միջոցներ տրամադրելը (անդամավճարներ) պետք է կատարվի կոլեկտիվ պայմանագրի կամ համաձայնագրի համաձայն և ի կատարումն դրա պահանջների: Հակառակ դեպքում այն կհամարվի անօրինական և կառաջացնի «Օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն»:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, որպես նախադեպ «Արմավիրի մարզպետարանի և Արմավիրի տարածքային պետական հիմնարկների և տեղական ինքնակառավարման մարմինների հասարակական կազմակերպությունների սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների միջև կոլեկտիվ համաձայնագրերի բացակայությամբ պայմանավորված, դադարեցվել են վերջինիս հետ հարաբերությունները»:

Վերոգրյալի հիման վրա, ելնելով անհրաժեշտությունից առաջարկվում է 2-օրյա ժամկետում «Արմավիրի մարզպետարան ներկայացնել տեղեկատվություն համայնքապետարանի, որպես գործատուի և արհեստակցական միության միջև կնքված կոլեկտիվ համաձայնագրի առկայության կամ բացակայության, ինչպես նաև կոլեկտիվ համաձայնագրի բացակայության պայմաններում կազմակերպության աշխատակիցների աշխատավարձից անդամավճարի փոխանցման մասին»:

Ընդ որում, եթե այդպիսի համաձայնագիր չի եղել, առաջարկվում է դադարեցնել օրենքի խախտմամբ աշխատակիցների աշխատավարձերից համապատասխան անդամավճարների փոխանցումը, իսկ համաձայնագրի առկայության դեպքում «Արմավիրի մարզպետարան ներկայացնել դրա լուսապատճենային օրինակը»:

ՄԱՐԶՊԵՏ՝

Недействительное подписание

Գ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

X

VERIFIED OCSP 04.08.2018 13:33:04 GMT+4

Подписано: MIRJANYAN GAGIK 2608810403

Կատարող՝

Ա. Ղուկասյան

